


51. *Antennaria caucasica* Boriss. — Կապվաքորիկ կովկասյան — Комачья лапка кавказская

EN B 1 ab(iii) + 2 ab(iii)



ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում  
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

**Կարեգորիա:** Վտանգված տեսակ է: Կովկասի էնդեմիկ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն:** Բազմամյա սպիտակ բաղիբե բաժնոտությամբ բույս (2) 5–15 (20) սմ բարձրությամբ, առաջող կոճղարմատով և փոփոխ աճման ուղղությամբ ընձյուղներով: Արմատները՝ վաղուղի տերևները՝ լայն բիստե, վերևում՝ բութ, երկու կողմից ծածկված առնելով սպիտակ մազիկներով: Չամբյուղները՝ 6–10 մմ տրամագծով, 3–6–ական՝ խմբված խիտ վահանիկաձև մաղկաբույլերում, կամ հազվադեպ միայնակ: Ծածկոցի բերքերը՝ հիմնականում սպիտակ, շատ հազվադեպ՝ թեթևակի վարդագույն: Մերմնիկները՝ մանր, ծովված խոզաններից կազմված պսակոտով:

**Տարածում:** Հայաստանում հանդիպում է Վերին Ախուրյանի (Լեռնագագաթ՝ Դուխասյան Մեծ), Ախարանի (Լեռնագագաթներ՝ Քյորոզլի և Հալար) և Գեղարքունի (Գրիծոր, Լեռնագագաթ՝ Սպիտակ սար) ֆորմատիկական շրջաններում: ԵՕՕ՝ 1650 քառ. կմ, ԱՕՕ՝ 20 քառ. կմ, լուսափռությունը՝ 5: Ընդհանուր առեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Նախակովկասը, Դաղստանը, Աբխազիան և Աբխազիայի Անդրկովկասը:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոգենոլոգիական առանձնահատկություններ:** Աճում է ենթալպյան և ալպյան գոտում ծ. մ. 2900–3200 (3500) մ բարձրությունների վրա, մարգագետիններում, քարքարոտ տեղերում: Ծաղկում է հունիս–հուլիս ամիսներին, պաղարեքում՝ հուլիսին–օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ:** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի գործող փոփոխություն, արածեցում:

**Պահպանության միջոցառումներ:** Աճեղավայրերից մեկը պահպանվում է «Մևան» ազգային պարկի բուֆերային գոտում, մյուսը՝ «Ռեկիկտային կրկես Քյորոզլի լեռան մոտ» բնության հուշարձանի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Category.** Endangered species. Endemic of the Caucasus. The extent of occurrence is less than 5000 km<sup>2</sup>, the area of occupancy is less than 500 km<sup>2</sup>.

It was not included in the first edition of the Red Data Book of Armenia. It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Description.** Perennial, white–tenuitomentose herb 5–15 cm with creeping rhizome and prostrate, rooting shoots. Rosette leaves broadly spatulate, obtuse. Capitula 6–10 cm in diameter, by 3–6 in dense corymbiform inflorescence; rarely solitary. Involucre phyllaries mainly white, sometimes pinkish. Achenes small, terete. Pappus of numerous, thin, connate at base setae.

**Distribution.** In Armenia it occurs in Upper Akhuryan (mountain Ghukasyan Mets), Aparan (mountains Qjoroghli and Halab) and Gegham (Gridzor, mountain Spitakasars) floristic regions. EOO is 1650 km<sup>2</sup>, AOO is 20 km<sup>2</sup>. The number of locations is 5. Besides of Armenia the area of distribution includes Ciscaucasia, Dagestan, West and East Transcaucasia.

**Ecological, biological and phytocoenological peculiarities.** Grows in alpine and sub–alpine belts, at the altitudes of 2900–3200 (3500) meters above sea level, in stony places, meadows. Flowering from June to July, fruiting from July to August.

**Limiting factors.** Restricted extent of occurrence and area of occupancy, global climate change, grazing.

**Conservation actions.** One of the sub–populations is situated in the buffer zone of “Sevan” National Park, the second in the area of “Relic circus at Qjoroghli mountain” nature monument. Necessary: monitoring of the population state.

Մկրբնադրյուններ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA. Аветисян В. Е. 1995. Род Antennaria Gaertn. Флора Армении, 9: 508–510. Koeltz Scientific Books.

Ханджян Н. С. 1985. Флора бассейна реки Мармарик (Армянская ССР). Флора, растительность и растительные ресурсы Армянской ССР, 9: 62–81. Ереван.

Դիագնոզ՝ Ն. Խանճյան

Compiler N. Khandjyan



52. *Anthemis caucasica* Chandjian — Անթեմ կովկասյան — Пылавка кавказская

EN B 1 ab(iii) + 2 ab(iii)



© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում  
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

**Կարգադրիչ:** Վտանգված տեսակ է: Տեսակի ընդհանուր տարածման ծայր արևելյան հատվածը գտնվում է Հայաստանի հյուսիսարևմտյան մասում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին Հայաստանում սպառնում է անհետացում՝ կապված գյուղատնտեսական գործունեության հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների ցուցակներում բացակայում է:

**Նկարագրություն:** Բազմամյա բույս՝ 20–25 (30) սմ բարձրության, ծածկված առնելով սպիտակավուն կամ երբեմն շեկավուն մազիկների խիտ քափառությամբ: Տերևները՝ փետրածև հատված, կազմված (6) 8–12 զույգ սեղմնաթերթից: Ցողունները՝ զազաքմային մեկ զամբյուղով, դեղին միաշաքր լեզվակափոր եզրային ծաղիկներով: Ծածկոցի թերթերը՝ լայն թաղանթային, բաց գույնի ալիքավոր եզրով: Սերմնիկները երկայնակի կողերով, վերևում թաղանթային շատ կարճ պսականման պսպրաով:

**Տարածում:** Հայաստանում աճում է միայն Վերին Ախուրյանի ֆորքիստիկական շրջանում (լեռնագագաթներ՝ Դուկասյան Մեծ և Օրսյուզ, բնակավայր Չիվինլի): EOO՝ 80 քառ. կմ, AOO՝ 16 քառ. կմ, լոկալիտետներ՝ 4: Բացի Հայաստանից, աճում է Արևմտյան Կովկասում, Արևմտյան, Հարավարևմտյան Անդրկովկասում և Անատոլիայի հյուսիսարևելյան հատվածներում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ:** Աճում է վերին և ենթալպյան լեռնային գոտիներում ծ. մ. 1700–2600 մ բարձրությունների վրա, քարաքվածքներին, խնարարատ և քարքարատ լանջերին: Մայկում է հունիս–հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիսին–օգոստոսին: Գեղազարդային տեսակ է:

**Մահմանափակող գործոններ:** Մահմանափակ տարածման և բնակության շրջաններ, անտեսական գործունեություն:

**Դառնականության միջոցառումներ:** Հայաստանում տեսակի աճելավայրերը պահպանվում են «Արփի լիճ» ազգային պարկի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել մոնիթորինգ բնական աճելավայրերում, ներդնել ծաղկագործության մեջ:

**Category.** Endangered species. The easternmost part of the main area of distribution is situated in the North–West Armenia. The extent of occurrence and the area of occupancy are less than 500 km<sup>2</sup>. The species faces extinction in Armenia caused by agricultural activity.

It was not included in the first edition of the Red Data Book of Armenia.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Description.** Perennial herb 20–25 cm, silvery–tomentose of appressed, whitish, sometimes reddish hairs. Leaves pinnate–dissected; segments in 8–12 pairs. Stem with 1 terminal capitulum. Involucre phyllaries broad, membranous, with light undulate margin. Ligulate flowers yellow, in 1 row. Achenes with elongated ribs. Pappus very short, corolla–shaped, squamiform.

**Distribution.** In Armenia it occurs in Upper Akhuryan (mountains Ghukasyan Mets and Oksyuz, settlements Daraksa and Chivinli) floristic region. EOO is 80 km<sup>2</sup>, AOO is 16 km<sup>2</sup>. The number of locations is 4. Besides of Armenia the area of distribution includes West Caucasus, West and South–West Transcaucasia, North–East Anatolia.

**Ecological, biological and phytocenological peculiarities.** Grows in upper and sub–alpine belts, at the altitudes of 1700–2600 meters above sea level, on screes and stony slopes. Flowering from June to July, fruiting from July to August.

**Limiting factors.** Restricted extent of occurrence and area of occupancy, economic activity, climate change.

**Conservation actions.** The habitats of the species are situated in “Arpi Lake” National Park. Necessary: monitoring of the population state, introduction into floriculture.

Սկզբնաղբյուրներ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA  
Ханджян Н. С. 1995. Anthemis L. Флора Армении. 9: 545–560. Koeltz Scientific Books.

Ханджян Н. С. Род Anthemis L. 2009. Конспект флоры Кавказа. Санкт–Петербург.

Կազմող՝ Ն. Խանջյան

Compiler N. Khandjyan



53. *Calendula persica* C.A.Mey. — Վաղենակ պարսկական — *Календула персидская*

EN B 1 ab(i,ii,iii) + 2 ab(i,ii,iii)



© Կամիլյա Թամանյան  
© Kamilla Tamanyan

**Կարեգործիչ:** Վտանգված տեսակ է: Հայտնի է երկու ֆորատիկական շրջաններում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աճում է ինտենսիվ յուրացվող տարածքներում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր որպես *Calendula arvensis* 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ:

**Նկարագրություն:** Միամյա նուրբ բույսեր՝ 5–25 սմ բարձրության: Ցողունները՝ հիմքից ճյուղավորված, վեր բարձրացող կամ վաղված, մանր գեղձային բաժառոթաձև: Տերևները՝ երկարավուն հակաձվածից մինչև երկարավուն նշտարաձև: Եզրային լեզվակավոր ծաղիկները սևեփալի դեղին: Ձառքայուցները 7–8 մմ լայնության, պաղի ժամանակ՝ գնդաձև: Մերմիկները՝ օղակաձև կորացած, խիտ գեղձային բաժառոթաձև:

**Տարածում:** Հայաստանում հայտնի է Չանգեզուրի (Ներքին հանդ) և Մեղրու (Շվանիձոր, Նյուվադի) ֆորատիկական շրջաններում: EOO 230 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Աճում է Արևելյան և Հարավային Անդրկովկասում, Հարավարևմտյան Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոգենոլոգիական առանձնահատկություններ:** Աճում է սառնիկ լեռնային գոտու 500–700 մ բարձրությունների վրա, չոր, խճաքայտ, քարքարոտ կամ կավային լանջերին, կիսասանապատային բուսականության մեջ, երբեմն որպես մոլախառ ջանքերում: Շատկում է ապրիլի սմբին, պտղաբերում՝ մայիսին:

**Մանամանավակող գործոններ:** Մանամանավակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ կամ յեզրադաշտի կտրված հողերի յուրացման հետ:

**Պահպանության միջոցառումներ:** Պաշտպանության մի մասը պահպանվում է «Շիկահոյ» պետական արգելոցի տարածքում: Անհրաժեշտ է իրականացնել պաշտպանության վիճակի մոնիթորինգ:

**Category.** Endangered species. It occurs in two floristic regions. The extent of occurrence and the area of occupancy are less than 500 km<sup>2</sup>. The species grows in the area of intensive land development.

It was included in the first edition of the Red Data Book of Armenia as *Calendula arvensis* under Category 2: Rare species.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Description.** Annual plants. Stems 5–25 cm, ascending or prostrate, branched from the base, minute glandulose. Leaves oblong-obovate to oblong-lanceolate. Marginal ligulate flowers narrow, golden-yellow. Capitula 7–8 mm wide, during fructification globular. All achenes ring-shaped, densely glandular; external ones distinctly larger than inner ones, on dorsal side hispid-aculeate, on ventral side and at margins winged; inner ones not winged, tuberculate.

**Distribution.** In Armenia it occurs in Zangezur (Nerkin Hand) and Meghri (Shvanidzor, Nyuvadi) floristic regions. EOO is 230 km<sup>2</sup>, AOO is 24 km<sup>2</sup>. The number of locations is 4. Grows in South and East Transcaucasia, South-West Asia.

**Ecological, biological and phytocoenological peculiarities.** Grows in lower mountain belt, at the altitudes of 500–700 meters above sea level, on dry stony and clay slopes, among semi-desert vegetation, sometimes as weed in the fields. Flowering in April, fruiting in May.

**Limiting factors.** Restricted extent of occurrence and area of occupancy, loss/degradation of habitats caused by land development.

**Conservation actions.** Part of the population grows in “Shikahogh” State Reserve. Necessary: monitoring of the population state.

Սկզբնաղբյուրներ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA. Аветисян В. Е. 1995. Род *Calendula*. Флора Армении, 9: 485–486. Koeltz Scientific Books.

Красная книга Армянской ССР. 1989: 67. Ереван.


Կազմող՝ Կ. Գ. Թամանյան

Compiler K. G. Tamanyan



54. *Carpesium abrotanoides* L. — Ազագու օշինդրանման — Карпезиум полынный

EN\* B 1 ab(ii,iii) + 2 ab(i,ii,iii)



© www.flickr.com/photos

Սկզբնաղբյուրներ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA  
Аветисян В. Е. 1995. Род *Carpesium*. Флора Армении, 9: 542. Koeltz Scientific Books.

Голубкова В. Ф. 1959. Род *Carpesium*. Флора СССР, 25: 498–506. М.—Л.

Аветисян В. Е. 2007. Новые данные к флоре Армении. Флора, растительность и растительные ресурсы Армении, 16: 92. Ереван.

Դիպոնդ Կ. Գ. Թամանյան  
Compiler K. G. Tamanyan

**Կարեգործիք:** Վտանգված տեսակ է: Հայտնաբերվել է վերջերս Երևանի ֆլորիստիկական շրջանի միակ աճելավայրում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը՝ 10 քառ. կմ–ից պակաս: Տեսակի կատեգորիան իջեցվել է մինչև EN, քանի որ տարածման հիմնական շրջանը գտնվում է հանրապետությունից դուրս:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն:** Բազմամյա խոտաբույս՝ հզոր խիտ մագուռ արմատով: Ցողունը՝ 50–80 սմ բարձրության, վերին կեսում հորքանաձև ճյուղավորված, ճյուղերը՝ երկար, ճիարտանման, մինչև վեր տերևակալված: Տերևները՝ երկարավուն, անհավասար կտրճ արցաստամանավոր եզրերով: Չամբողջները՝ բազմաթիվ, մանր, ձվաձև–երկարավուն, տերևածոցերում: Եզրի ծաղիկները բերանման պսակով, դժգույն դեղին:

**Տարածում:** Հայաստանում հայտնի է միայն Երևանի ֆլորիստիկական շրջանում, Լուկաշին գյուղի շրջակայքում: АОО 4 քառ. կմ է, ընկալիտեղ՝ 1: Հայաստանից բացի, հանդիպում է Նախակովկասում, Արևմտյան և Կենտրոնական Անդրկովկասում, Թալիշում, Եվրոպայում, միջերկրածովյան ավազանի երկրներում, Կենտրոնական և Արևելյան Ասիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ:** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 700–800 մ բարձրությունների վրա, առումների ավերին, խոնավ ծառակներում, խոնավ տեղերում: Մասկում է հունիս–հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս–օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ:** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա հողերի յուրացում հետևանքով:

**Պահպանության միջոցառումներ:** Պահպանության գործողություններ չեն իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել հետազոտական գործողություններ տեսակի արեալի հաստատման ուղղությամբ և պոպուլյացիայի վիճակի ճշտում և մոնիթորինգ:

**Category.** Endangered species. Recently the only habitat has been found in Yerevan floristic region. The extent of occurrence and the area of occupancy are less than 10 km<sup>2</sup>. The category of threat has downgraded to EN since the main area of distribution is situated beyond the borders of Armenia.

It was not included in the first edition of the Red Data Book of Armenia.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Description.** Perennial herb with thick, densely fibrose root. Stems 50–80 cm, rather thick, paniculate branched in upper part; branches long, virgate, foliated up to the tip. Leaves oblong, irregularly serrate–dentate. Capitula numerous, small, ovate–oblong, axillary. Marginal flowers with pale yellow, filiform corollas.

**Distribution.** In Armenia it occurs in Yerevan (surroundings of the village Lukashin) floristic region. АОО is 4 km<sup>2</sup>. The number of locations is 1. Besides Armenia the species grows in Ciscaucasia, East and West Transcaucasia, Talish, Europe, countries of the Mediterranean Sea basin, Central and East Asia.

**Ecological, biological and phytocoenological peculiarities.** Grows in lower mountain belt, at the altitudes of 700–800 meters above sea level, on the banks of the streams, in moist ravines and humid places. Flowering from June to July, fruiting from July to August.

**Limiting factors.** Restricted extent of occurrence and area of occupancy, loss/degradation of habitats caused by land development.

**Conservation actions.** No conservation actions. Necessary: survey on population numbers and range, search of new habitats, monitoring of the state of the population.



55. *Centaurea alexandrii* Bordz. — Տերեփուկ Ալեքսանդրի — *Василек Александра*

ENB 1 ab(ii,iii) + 2 ab(i,ii,iii)



© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում  
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

**Կարեգործիչ:** Վտանգված տեսակ է: Հայաստանի էնդեմիկ է: Հանդիպում է միայն Մեղրու ֆորիստիկական շրջանում, մարդածին ուժեղ ազդեցության տարածքներում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն:** Բազմամյա բույս է: Ցողունները ճիպտաման, բազմիցս ճյուղավորված, նոսր տերևակալված: Տերևները 1–2 փետրածև բաժանված, գծային–նշտարածև սեզմենտներով: Չափերը՝ երկարավուն–ձվածև: Շածկացի թերթերը՝ սպիտակավուն կամ դեղնադարչնագույն: Շաղկենները՝ սպիտակ կամ վարդագույն: Սերմնիկները՝ 2 մմ երկարության: Պսակուրը՝ 1–1,5 մմ երկարության:

**Տարածում:** Հայաստանում հայտնի է միայն Մեղրու ֆորիստիկական շրջանում (Մեղրի, Աղարա, Շվանիձոր, Նյուվադի): AOO 16 քառ. կմ է, լոկալիտներ՝ 1:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ:** Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 400–1000 մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ լանջերին ժայռերի միջև, չոր հուններում, գետերի ափերի ավազների վրա, կաղնու կամ գիհու նոսրանտառներում, ֆրիգանոիդներում: Շաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

**Սահմանափակող գործոններ:** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կապված հողատարածքների յուրացման հետ:

**Պահպանության միջոցառումներ:** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել սրբալույսացիայի վիճակի մոնիթորինգ:

**Category.** Endangered species. Endemic of Armenia which it grows only in Meghri floristic region in the area of strong anthropogenic impact. The extent of occurrence and the area of occupancy are less than 500 km<sup>2</sup>.

It was not included in the first edition of the Red Data Book of Armenia.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Description.** Perennial herbs. Stems thin, virgate, repeatedly branched, laxly foliated, in upper part arachnoid. Leaves pinnatifid or bipinnatifid; segments linear–lanceolate. Capitula 11–14 mm long, oblong–ovate. Involucre phyllaries whitish or yellowish–brown. Flowers white or pinkish. Achenes 2 mm long, oblong–cuneate, with vertical white stripes. Pappus 1–1,5 mm long.

**Distribution.** In Armenia it occurs only in Meghri (Meghri, Aldara, Shvanidzor, Nyuvadi) floristic region. AOO is 16 km<sup>2</sup>. The number of locations is 1.

**Ecological, biological and phytocoenological peculiarities.** Grows in lower mountain belt, at the altitudes of 400–1000 meters above sea level, on dry stony slopes, in dry riverbeds, on the sands of river banks, in oak or juniper open forests, among phryganoid vegetation. Flowering in June, fruiting in July.

**Limiting factors.** Restricted extent of occurrence and area of occupancy, loss/degradation of habitats caused by land development.

**Conservation actions.** No conservation actions. Necessary: monitoring of the population state.

Սկզբնաղբյուրներ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA  
Габриэлян Э. Ц. 1995. Род *Centaurea*. Флора Армении, 9: 368–435. Koeltz Scientific Books.

Կազմող՝ Կ. Գ. Թամանյան  
Compiler K. G. Tamanyan



56. *Centaurea arpensis* (Czer.) Wagenitz. — Տերեփուկ արփայի — Василек арпенинский

EN B 1 ab(ii,iii) + 2 ab(i,ii,iii)



© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում  
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

**Կարեգորիա:** Վտանգված տեսակ է: Հայաստանի էնդեմիկ է: Աճում է երկու ֆլորիստիկական շրջաններում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս: Աճում է ինտենսիվ անտեսական գործունեության տեղերում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավերժացման ընդգրկված չէ:

**Նկարագրություն:** Բազմամյա խոտաբույս է: Ցողունները՝ բարակ ճիպտաման, բազմաթիվ անգամ ճյուղավորված, թեթևակի վեր ուղղված, խիտ տերևակալված: Տերևները՝ գծային–նշտարած, ամբողջական, նեղ: Չամբյուղները՝ 14–15 մմ երկարության, երկարավուն: Փայտերի թերթերը՝ թաղանթային, կիսակլոր, սանրածև–թարթիչավոր եզրերով: Շաղկիները՝ սպիտակավուն: Մերմիկները՝ երկարավուն, 5–6 մմ երկարության, սպիտակավուն–կրեմագույն: Պապուսը՝ 5–6 մմ երկարության:

**Տարածում:** Աճում է Երևանի (Վեդի, Տիգրանաշեն, կանյոն Ջանդամ–դարա) և Դարեղեգիսի (Եղեգնաձորի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 600 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ, լոկալիտները՝ 4:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոտիկական առանձնահատկություններ:** Աճում է միջին լեռնային գոտում ծ. մ. 1100–1500 մ բարձրությունների վրա, չոր կավային, խճաքաքաղ բլուրների վրա, քարաքավածքներին, գլխու նոսրանտառում, ֆրիգանոիդներում: Շաղկում է հունիս–հուլիս ամիսներին, սպաղսբերում՝ հուլիս–օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ:** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, անբավարար կորուստ կամ դեգրադացիա՝ կապված հողատարածքների յուրացման հետ:

**Պահպանության միջոցառումներ:** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Category.** Endangered species. Endemic of Armenia which grows in two floristic regions. The extent of occurrence is less than 5000 km<sup>2</sup>, the area of occupancy is less than 500 km<sup>2</sup>. The species grows in the area of intensive economic activity.

It was included in the first edition of the Red Data Book of Armenia as Category 2: Rare species.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Description.** Perennial herbs. Stems thin, virgate, repeatedly branched, almost to the tip densely foliated, in upper part unbranched. Leaves linear–lanceolate. Capitula oblong, 14–15 mm long. Involucre phyllaries with membranous, semiorbicular, pectinate–ciliate at margins appendages. Flowers whitish. Achenes whitish–creamy, oblong, not narrowed at base, 5–6 mm long. Pappus 5–6 mm long.

**Distribution.** In Armenia it occurs in Yerevan (Vedi, Tigranashen, canyon Djandam dara) and Daregis (surroundings of Yeghegnadzor) floristic regions. EOO is 600 km<sup>2</sup>, AOO is 24 km<sup>2</sup>. The number of locations is 4.

**Ecological, biological and phytocoenological peculiarities.** Grows in middle mountain belt, at the altitudes of 1100–1500 meters above sea level, on dry clay, stony slopes and screes, in juniper open forest, among phryganoid vegetation. Flowering from June to July, fruiting from July to August.

**Limiting factors.** Restricted extent of occurrence and area of occupancy, loss/degradation of habitats caused by land development.

**Conservation actions.** No conservation actions. Necessary: monitoring of the population state.

Սկզբնաղբյուրներ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA. Габриэлян Э. Ц. 1995. Род *Centaurea*. Флора Армении, 9: 368–435. Koeltz Scientific Books.

Красная книга Армянской ССР. 1989: 67. Ереван.

Կազմող՝ Կ. Գ. Թամանյան

Compiler K. G. Tamanyan



57. *Centaurea elbrusensis* Boiss & Buhse — Տերեփուկ Էլբրուսյան — Василек эльбурсский

EN\* B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)



© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում  
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

**Կարեգործիչ:** Վտանգված տեսակ է: Իրանական այս տեսակը Հայաստանում աճում է երկու ֆլորիստիկական շրջաններում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ–ից պակաս է: Հայաստանի տարածքում շատ հազվագյուտ է, քեհ աճում է որևէ սպառնալիքի քիչ ենթարկվող տեղերում և հիմնական տարածման շրջանը գտնվում է Իրանում: Այդ պատճառով տեսակի կատեգորիան նվազեցվել է մինչև EN:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն:** Բազմամյա խոտաբույս է: Ցողունը փափուկ, խիտ տերևակալված, միշտ մեկ զամբյուղով: Տերևները խիտ մոխրագույն թավառ, նշտարած, սուր, վարդակալիները՝ կորոններով, միջինները՝ նստադիր: Փաթերը՝ զավաթաձև մուգ դարչնագույն հավերուկներով: Ծաղիկները՝ սպիտակակրեմագույն, առջային խոյրվակը և վերնակապը՝ վարդամանուշակագույն: Մերմնիկները՝ կարճ պսպուռով:

**Տարածում:** Հայաստանում հանդիպում է Չանգեզուրի (Ողջի գետի վերնագավառ) և Մեղրու (Լիճքի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ է, լոկալիտները՝ 2: Հայաստանից բացի աճում է Հյուսիսային և Արևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիլոգենոլոգիական առանձնահատկություններ:** Աճում է ենթալպյան և ալպյան գառիներում ծ. մ. 2300–3000 մ բարձրությունների վրա, մարգագետիններում, ժայռերի միջև: Ծաղկում է հուլիս–օգոստոս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոս–սեպտեմբերին:

**Սահմանափակող գործոններ:** Սահմանափակ տարածման և բնակության շրջաններ, կլիմայի փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ:** Պապուլյացիայի մի մասը պահպանվում է «Արևիկ» ազգային պարկի սահմաններում: Անհրաժեշտ է իրականացնել պապուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Category.** Endangered species. This Iranian species grows in two floristic regions of Armenia. It is very rare in the territory of Armenia though grows in places subjected to no danger and the main area of distribution is situated in Iran. Thus the category of threat has downgraded to EN.

It was not included in the first edition of the Red Data Book of Armenia.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Description.** Perennial herbs with thickened vertical root. Stems prostrated from the centre of leaf rosette, densely foliated. Cauline leaves densely villose–grey, lanceolate or linear–lanceolate, acute; rosette ones petiolate, pinnatifid, with 2–3 triangular segments. Capitula solitary. Involucre cupuliform. Appendages of involucre phyllaries with dark brown or blackish margin and whitish fimbrioles. Flowers whitish–creamy. Pappus short.

**Distribution.** In Armenia it occurs in Zangezur (Vohchi river) and Meghri (surroundings of Lichk) floristic regions. AOO is 8 km<sup>2</sup>. The number of locations is 2. Besides Armenia grows in North and West Iran.

**Ecological, biological and phytocoenological peculiarities.** Grows in sub–alpine and alpine belts, at the altitudes of 2300–3000 meters above sea level, in the meadows, between rocks. Flowering from July to August, fruiting from August to September.

**Limiting factors.** Restricted extent of occurrence and area of occupancy, climate change.

**Conservation actions.** Part of population grows on the area of “Arevik” National park. Necessary: monitoring of the population state.

Մկրգնադրյուններ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA  
Габриэлян Э. П. 1995. Род *Centaurea*. Флора Армении, 9: 368–435. Koeltz Scientific Books.


Կազմող՝ Կ. Գ. Թամանյան

Compiler K. G. Tamanyan



58. *Centaurea erivanensis* (Lipsky) Bordz. — Տերեփուկ երևանյան — Василек ереванский

VU\* B 1 *ae*(i,ii,iii) + 2 *ab*(i,ii,iii)



© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում  
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

**Կարեգործիչ:** Խոցելի տեսակ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս: Աճելավայրերում բավականին առատ է, հետևաբար կատգորիան իջեցվել է մեկ աստիճանով:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ:

**CITES**–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ: **Նկարագրություն:** Բազմամյա խոտաբույս է: Յուղունը՝ առնելով մոխրագույն բավոտ, նուր տերևակալված: Չամբյուղները ձվաձև: Ծածկոցի թերթերի հավելակները՝ սղոցաառամնավոր: Ծաղիկները՝ սպիտակակերմագույն: Մերմնիկները՝ կարճ թաթիլավոր պսակառավ:

**Տարածում:** Հայտնի է Երևանի ֆորիստիկական շրջանում (Երևան, Շորաղբյուր, Չովաշեն, Գեղաղիք, Ենգիշա, Ուրծի լեռնաշղթա, «Էրեբունի» պետական արգելոց): EOO 970 քառ. կմ է, AOO՝ 100 քառ. կմ, լոկալիտները՝ 5: Հայաստանից բացի հանդիպում է Նախիջևանում (Ազնաբերդ), Արևմտյան Հայաստանում և Հյուսիսարևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ:** Աճում է ստորինից մինչև վերին լեռնային գոտի, ծ. մ. 700–2000 մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ, կավային կամ գիպսակիր, աղակալված լանջերին, կիսաանապատում, տափաստանում, ֆիզոստանում բուսականության մեջ տրոպիկական տային համակցություններում: Ծաղկում է հունիս–հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս–օգոստոսին: Չափազանց բազմաձև տեսակ է:

**Սահմանափակող գործոններ:** Աճելավայրերի կորուստ կամ դեգրադացիա՝ կասկած հողատարածքների յուրացման հետ:

**Պահպանության միջոցառումներ:** Պաշտպանության մի մասը պահպանվում է «Խոսրովի անտառ» և «Էրեբունի» պետական արգելոցների տարածքներում: Անհրաժեշտ է իրականացնել պաշտպանության վիճակի մոնիթորինգ, «Էրեբունի» պետական արգելոցի տարածքի ընդարձակում՝ կարմիր կավերի ընդգրկմամբ:

**Category.** Vulnerable species. The extent of occurrence is less than 5000 km<sup>2</sup>, the area of occupancy is less than 500 km<sup>2</sup>. It is rather abundant in the habitats. Thus the category of threat has downgraded to VU.

It was included in the first edition of the Red Data Book of Armenia under Category 3: Reducing species.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Description.** Perennial herbs with thickened vertical root. Stems erect, adpressed grayish pubescent, not densely foliated. Involucre phyllaries with ovate, serrate–dentate appendages. Flowers creamy white. Achenes with short ciliate pappus.

**Distribution.** In Armenia it is found in Yerevan (Yerevan, Shorahbyur, Zovashen, Dzorahbyur, Yengidja, Urts mountain range, “Erebuni” State reserve) floristic region. EOO is 970 km<sup>2</sup>, AOO is 100 km<sup>2</sup>. The number of locations is 5. Besides Armenia grows in Nakhichevan (Aznaberd), East Anatolia and North–West Iran.

**Ecological, biological and phytocoenological peculiarities.** Grows from lower to upper mountain belts, at the altitudes of 700–2000 meters above sea level, on dry stony, gypsaceous or saline slopes, in semi–desert, steppe, among phryganoid vegetation, in tragacanth communities. Flowering from June to July, fruiting from July to August. Extremely variable species.

**Limiting factors.** Loss/degradation of habitats caused by land development.

**Conservation actions.** Part of the population grows in “Khosrov Forest” and “Erebuni” State Reserves. Necessary: monitoring of the population state, enlargement of the territory of “Erebuni” State Reserve including area of red clays.

**Սկզբնաղբյուրներ/References**

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA. Габриэлян Э. Ц. 1995. Род *Centaurea*. Флора Армении, 9: 368–435. Koeltz Scientific Books.

Красная книга Армянской ССР. 1989: 68. Ереван.

Կազմող՝ Կ. Գ. Թամանյան

Compiler K. G. Tamanyan



59. *Centaurea leuzeoides* (Jaub. & Spach) Walp. — Տերեփուկ լեզեանման — Василек левзеоподобный



© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում  
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

## Մկզ քննադրություններ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի  
 հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA.  
Габриэлян Э. Ц. 1995. Род *Centaurea*. Флора Армении, 9:  
368–435. Koeltz Scientific Books.

Красная книга Армянской ССР. 1989: 68–69. Ереван.

Կազմող՝ Կ. Գ. Թաթևյան

Compiler K. G. Tamanyan

$$CRB1ab(i,ii,iii,iv) + 2ab(i,ii,iii,iv)$$

**Կարեգործիա:** Կրիստիակական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնի է երկու ֆորմատիկական շրջաններում: Տարածման և բնակչության շրջանների մակերեսը 10 քառ. կմ–ից պակաս է: Կտրող է անհետանալ չափսզանց հազվագյուտ լինելու պատճառով:

Հայաստանի Կարմիր զորքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն:** Բազմամյա 20–85 սմ բարձրության բույս՝ ծածկված սպիտակ կամ մոխրագույն փունջ–փունջ ոստայնաման բավառությամբ: Մառիմ տերևները՝ 9–17 սմ երկարության, 3–7 սմ լայնության, 1–4 զույգ եղ–նշաքսած եզրային սեզնեմուկերով, 3–5 սմ երկարության կոթունով: Չամբյուղները՝ համարյա զնդած: Շածկոցի թերթերը բազմաշարք՝ ուռուցիկ, հավելյալներով: Շաղիկները՝ վարդագույն: Սերմնիկները՝ 6–8,5 մմ երկարության՝ Պապայսը՝ 6–9 մմ երկարության:

**Տարածում:** Հայտնի է Դարեղեզիսի (Մարտիրոս գյուղի շրջակայք) և Ջանգեղարի (Տաթև գյուղի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ. կմ է, լույս/խտանքը՝ 2, որոնց միջև հեռավորությունը 45 կմ է: Հայաստանից բացի աճում է Նախիջևանում և Իրանում:

**Կենսաբանական, Էկոլոգիական և Ֆիզիոգենետիկական առանձնահատկություններ:** Աճում է միջին լեռնային գառում, ծ. մ. 1700–1900 մ բարձրությունների վրա, չոր քարաքարտ լանջերին, տափաստանում: Շաղկիում է հունիս–հուլիս ամիսներին, պաղպաղեքում՝ հուլիս–օգոստոսին:

**Սահմանափակող գործոններ:** Սահմանափակ տարածում, հո-  
դատարածքների յուրացում:

**Պահպանության միջոցառումներ:** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել հետազոտական աշխատանքներ՝ նոր աճելավայրեր հայտնաբերելու համար, իրականացնել սրտայտ յուցիայի վիճակի մոնիթորինգ:

**Category.** Critically endangered species. It occurs in two floristic regions. The extent of occurrence and area of occupancy are less than 10 km<sup>2</sup>. The species may become extinct for being extremely rare.

It was included in the first edition of the Red Data Book of Armenia under Category 1: Endangered species.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Description.** Perennial herbs, white or grey floccose-arachnoid. Stems 20–80 cm. Basal leaves 9–17, 3–7 cm, with 1–4 pairs of lanceolate lateral segments; petioles 3–5 cm long. Capitula almost oblong. Involucre phyllaries in numerous rows, with domed, decurrent, rounded at the apex appendages. Flowers pink; marginal ones with large lanceolate-linear lobes. Achenes 6–8.5 mm long. Pappus 6–9 mm long, seta of the inner ring 3–5 mm long.

**Distribution.** In Armenia it grows in Darelegis (surroundings of Martiros village) and Zangezur (neighborhoods of Tatev village) floristic regions. AOO is 8 km<sup>2</sup>, the number of locations is 2, the distance between which is 45 km. Besides Armenia the species grows in Nakhichevan and Iran.

**Ecological, biological and phytocoenological peculiarities.** Grows in middle mountain belt, at the altitude of 1700–1900 meters above sea level, on dry stony slopes, in the steppe. Flowering from June to July, fruiting from July to August.

**Limiting factors.** Restricted distribution, land development.

**Conservation actions.** No conservation actions. Necessary: monitoring of the population state, search of new habitats.



60. *Centaurea phaeopappoides* Bordz. — Տերևիուկ ֆեոպապուսանման — Василек феопапусовидный

EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)



© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում  
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

**Կարեգործիչ:** Վտանգված տեսակ է: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանում: Տարածման և քնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ–ից պակաս է: Աճում է ինտենսիվ տնտեսական գործունեության գոտում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ:

Ընդգրկված չէ CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն:** Բազմամյա խոտաբույս է: Ցողունները՝ խիտ տերևակալված, ստորին մասում՝ ճյուղավորված: Տերևները՝ ամբողջական, նստադիր, նեղ–գծային: Չամբայունները՝ ձվաձև, խորանարդաձև, 15–20 մմ երկարության, 10–20 մմ լայնության: Մածկացի թերթերի հավելուկները՝ ձվաձևից մինչև համարյա կլորավուն, փայլուն, բաց գույնի կամ շիկակարմիր, թաղանթային, նուրբ թաթիկավոր եզրերով, վերևում սրացած կարճ փշիկով: Մերմնիկները՝ փոքր պսակավոր:

**Տարածում:** Հայտնի է Գարեդեգի ֆլորիստիկական շրջանում (Վայոց Չորի լեռնանցք, Եղեգիս, Ջերմուկ և այլն): EOO 360 քառ. կմ է, AOO՝ 40 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի, աճում է Հյուսիսարևմտյան Իրանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոգենոլոգիական առանձնահատկություններ:** Աճում է միջին և վերին լեռնային գոտիներում, ծ. մ. 1300–2300 մ բարձրությունների վրա, չոր քարաքարտլանջերին, ժայռերի միջև, չինգիլների վրա, կաղնու և գիհու մուրանատներում: Մաղկում է հուլիս ամսին, պաղարեքում՝ օգոստոսին:

**Մահմանափակող գործոններ:** Մահմանափակ տարածում և հողատարածքների յուրացում:

**Պահպանության միջոցառումներ:** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է իրականացնել պապուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Category.** Endangered species. It occurs in two floristic regions. The extent of occurrence and area of occupancy are less than 500 km<sup>2</sup>. Grows in the area of intensive economic activity.

It was included in the first edition of the Red Data Book of Armenia under Category 2: Rare species.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Description.** Perennial herbs. Stems branched in the lower part, densely foliated almost to the tip. Leaves entire, narrowly linear. Capitula ovate or cubic, 15–20 x 10–20 mm. Appendages of involucre phyllaries membranous, shiny, light or foxy–rouge, ovate to almost rounded, at apex acuminate into small prickles, fine ciliate at margins. Pappus small.

**Distribution.** In Armenia it grows in Darelegis (Vayots Dzor mountain pass, Yeghegis, Djermuk, etc.) and Meghri (surroundings of Lichk) floristic regions. EOO is 360 km<sup>2</sup>, AOO is 40 km<sup>2</sup>. The number of locations is 4. Besides Armenia grows in North–West Iran.

**Ecological, biological and phytocoenological peculiarities.** Grows in middle and upper mountain belts, at the altitudes of 1300–2300 meters above sea level, on dry stony slopes, between rocks, on screes, in oak and juniper open forests. Flowering in July, fruiting in August.

**Limiting factors.** Restricted distribution and land development.

**Conservation actions.** No conservation actions. Necessary: monitoring of the population state.

Սկզբնաղբյուրներ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA  
Габриэлян Э. Ц. 1995. Род *Centaurea*. Флора Армении, 9: 368–435. Koeltz Scientific Books.

Красная книга Армянской ССР. 1989: 69. Ереван.

Կազմող Կ. Գ. Թամանյան

Compiler K. G. Tamanyan



61. *Centaurea rhizocalathium* (K.Koch) Tchich. — Տերեփուկ արմապազամբյուղային — Василек корнекорзинковый

EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)



© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում  
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

**Կարեգործիք:** Վտանգված տեսակ է: Հայտնի է երկու ֆորմատիվական շրջաններում, որտեղ հանդիպում է շատ հազվադեպ: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ–ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ–ից պակաս: Աճում է ինտենսիվ տնտեսական գործունեության գոտում:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ CITES–ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

**Նկարագրություն:** Բազմամյա անցողիկ բույս՝ 2–5 սմ բարձրության, երկար խիստ ճյուղավորված կոճղարմատով: Տերեփերը երկարավուն, փետրածև հատված: Չամբյուղները՝ միայնակ, տեղավորված արմատամերձ տերեփերի վարդակի կենտրոնում, 15–36 սմ լայնության: Շածկոցի թերթերը՝ առանց հավերկի կամ դրանք ռելիեֆված են սրածայրի մինչև 2 սմ երկարության: Շաղկները՝ դեղին:

**Տարածում:** Աճում է Երևանի (Չովաշեն և Գառնի գյուղերի միջև) և Չամբեզուրի (Գորիս և Սիսիան քաղաքների միջև, լեռնագագաթ Խուստուփ) ֆորմատիվական շրջաններում: EOO 2560 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Արևելյան Անատոլիայում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական առանձնահատկություններ:** Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1200–1600 մ բարձրությունների վրա, կիսաանապատում, տափաստաններում: Շաղկում է հունիս–հուլիս ամիսներին, պտղաբերում՝ հուլիս–օգոստոսին:

**Մահմանափակող գործոններ:** Մահմանափակ տարածում, հողատարածքների յուրացում:

**Պահպանության միջոցառումներ:** Պահպանություն չի իրականացվում: Անհրաժեշտ է կազմակերպել հետազոտական աշխատանքներ նոր աճելավայրեր հայտնաբերելու համար, իրականացնել պոպուլյացիայի վիճակի մոնիթորինգ:

**Category.** Endangered species. It occurs in two floristic regions, in both regions is very rare. The extent of occurrence is less than 5000 km<sup>2</sup>, the area of occupancy is less than 500 km<sup>2</sup>. Grows in the area of intensive economic activity.

It was not included in the first edition of the Red Data Book of Armenia.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern Convention.

**Description.** Perennial stemless or almost stemless herbs 2–5 cm, with long, branched rhizome. Rosette leaves elongate, pinnatisect up to q or more, slightly scabrid. Capitulum solitary, at the centre of leaf rosette, 15–36 mm wide. Involucre bracts without appendages or appendages reduced to cusp up to 2 mm long. Flowers yellow.

**Distribution.** In Armenia it grows in Yerevan (between the villages Zovashen and Garni) and Zangezur (between the cities Goris and Sisian, and Khustup Mountain) floristic regions. EOO is 2560 km<sup>2</sup>, AOO is 12 km<sup>2</sup>. The number of locations is 3. Besides Armenia grows in East Anatolia.

**Ecological, biological and phytocoenological peculiarities.** Grows in middle mountain belt, at the altitudes of 1200–1600 meters above sea level, in semi-desert and steppe. Flowering from June to July, fruiting from July to August.

**Limiting factors.** Restricted distribution and land development.

**Conservation actions.** No conservation actions. Necessary: monitoring of the population state, search of new habitats.

Սկզբնաղբյուրներ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA  
Габриэлян Э. Ц. 1995. Род *Centaurea*. Флора Армении, 9: 368–435. Koeltz Scientific Books.

Կազմող՝ Կ. Գ. Թամանյան

Compiler K. G. Tamanyan



62. *Centaurea schelkovnikovii* Sosn. — Տերեփուկ Շելկովնիկովի — *Василек Шелковникова*

CRB 1 *ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)*



© ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի հերբարիում  
© Herbarium of the Institute of Botany of NAS of Armenia

**Կարեգործիչ:** Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հա-  
րավային Անդրկովկասի էնդեմիկ է: Հայաստանում հայտնի է Մեղրու  
ֆլորիստիկական շրջանում, որտեղ հանդիպում է չափազանց հազ-  
վադեպ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ.  
կմ-ից պակաս է:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ  
ընդգրկված չէր:

Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածնե-  
րում:

**Նկարագրություն:** Բազմամյա խոտաբույս է: Ցողունները՝  
քերականի աղեղնաձև թերթած, տերևների վարդալիկ կենտրոնից բարձ-  
րացող: Տերևները՝ խոր քնարածև-փետրածև բաժանված, զոգա-  
վոր-սառամնավոր, կանաչավուն-մոխրագույն նուրբ թավառ: Ձամբ-  
յուղները՝ միայնակ, ձվաձև: Մածկոցի թերթերի հավերկեցները՝ սև կամ  
շագանակագույն եզրերով: Եզրային ծաղիկները՝ մանուշակագույն-  
կապույտ, երկնագույն կամ սպիտակավարդագույն, միջինները՝ մա-  
նուշակագույն: Սերմնիկները՝ երկարավուն, կարճ պապուսով:

**Տարածում:** Աճում է Մեղրու ֆլորիստիկական շրջանում (Վար-  
դանաձոր, Լիճք, Տաշտունի լեռնանցք): AOO՝ 8 քառ. կմ, լոկալի-  
տետները՝ 2: Հայաստանից բացի, աճում է Նախիջևանում:

**Կենսաբանական, էկոլոգիական և ֆիտոցենոլոգիական  
առանձնահատկություններ:** Աճում է ենթալպյան և ալպյան գոտի-  
ներում, ծ. մ. 2200–2700 մ բարձրությունների վրա, քարքարոտ, խճաքա-  
րոտ տեղերում: Մաղկում է հուլիս ամսին, պտղաբերում՝ օգոստոսին:

**Մահմանափակող գործոններ:** Մահմանափակ ապրածում, կլի-  
մայի գրգռյալ փոփոխություն:

**Պահպանության միջոցառումներ:** Պապուլյացիայի մի մասը  
պահպանվում է «Արեվիկ» ազգային պարկի սահմաններում: Անհրա-  
ժեշտ է կազմակերպել հետազոտական աշխատանքներ նոր աճե-  
լավայրեր հայտնաբերելու համար, իրականացնել պապուլյացիայի  
վիճակի մոնիթորինգ:

**Category.** Critically endangered species. Endemic of South  
Transcaucasia. In Armenia it grows in Meghri floristic region where is  
extremely rare. The extent of occurrence and area of occupancy are less  
than 10 km<sup>2</sup>.

It was not included in the first edition of the Red Data Book of  
Armenia.

It is not included in the Annexes of CITES and that of the Bern  
Convention.

**Description.** Perennial herbs with creeping long branched rhizomes  
and few fusiform roots. Stems slightly curved, coming out from the centre  
of leaf rosette. Leaves lyrate-pinnatifid and remote emarginated-dentate,  
greenish-grey, fine tomentose, early dying. Capitulum solitary, ovate  
or oblong-ovate, 18–20 x 12–15 mm. Appendages of basal involucre  
phyllaries completely covering the upper phyllary; at the margins silvery  
long-fimbriate, with black or brown margins. Marginal flowers purple-  
blue, light blue, whitish or pinkish-purple; central ones violet-purple.  
Achenes oblong-elliptic. Pappus 2–3 mm long.

**Distribution.** In Armenia it is found in Meghri floristic region  
(Vardanadzor, Lichk, Tashtun mountain pass). AOO is 8 10 km<sup>2</sup>,  
the number of locations is 2. Besides Armenia the species grows in  
Nakhichevan.

**Ecological, biological and phytocoenological peculiarities.** Grows in  
sub-alpine and alpine belts, at the altitude of 2200–2700 meters above sea  
level, in stony slopes. Flowering in July, fruiting in August.

**Limiting factors.** Restricted distribution, global climate change.

**Conservation actions.** Part of population grows on the area of  
“Arevik” National park. Necessary: monitoring of the population state,  
search of new habitats.

Սկզբնաղբյուրներ/References

Հայաստանի ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի  
հերբարիումի նյութեր

Herbarium materials of the Institute of botany of NAS RA.  
Габриэлян Э. И. 1995. Род *Centaurea*. Флора Армении, 9:  
368–435. Koeltz Scientific Books.

Կազմող՝ Կ. Գ. Թամանյան

Compiler K. G. Tamanyan